Կարգապահական գործ թիվ ԿԳ-24159

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՓԱՍՏԱԲԱՆ ԿԱՐԻՆԵ ՖԵԼԻՔՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Վահե Աստվածատրյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Կարինե Բաղդասարյանի, Գուրգեն Թորոսյանի և Արաքս Վարդանյանի,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ՝ փաստաբան Կարինե Խաչատրյանի

քննության առնելով փաստաբան **Կարինե Ֆելիքսի Խաչատրյանի (այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 162) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.**

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր՝ Հ. Ավագյանը **(այսուհետ՝ նաև Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների **պալատ (այսուհետ՝ նաև Պալատ)**, հայտնել է, որ իր վարույթում է գտնվում թիվ ԵԴ1/0443/01/24 քրեական գործն ըստ մեղադրանքի Մարգպետունի Վարդգեսի Մինասյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, Արա Հարությունի Սարգսյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-252-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և Սամվել Ռազմիկի Քոչարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

թիվ ԿԳ-24159-2-Ա
13 նոյեմբերի 2024թ.

2024 թվականի հունիսի 20-ի դատական նիստին փաստաբան Կարինե Խաչատրյանը ներկայացել է շուրջ 1 ժամ ուշացմամբ՝ պատճառաբանելով, որ Դատարանի Կենտրոն նստավայրում մասնակցել է մեկ այլ դատական նիստի:

Դատական նիստերի դահլիճ ներկայանալուց հետո՝ նիստի ընթացքում նախագահող դատավորի և փաստաբան Կարինե Խաչատրյանի միջև տեղի է ունեցել հետևյալ երկխոսությունը՝

«Նախագահող դատավոր Հ. Ավագյան - *Բարև Ձեզ, համեցեք: Դատարանն արձանագրում է, որ դատական նիստին ներկայացավ մյուս հանրային պաշտպանը: Ձեր նշանակման փաստաթուղթը կա՞ Ձեզ մոտ:*

Փաստաբան Կ.Խաչատրյան - *Ոչ, պատվարժան Դատարան:*

Նախագահող դատավոր Հ. Ավագյան - *Որտե՞ղ է:*

Փաստաբան Կ.Խաչատրյան - *Դատարան պետք ա ուղարկեին:*

Նախագահող դատավոր Հ. Ավագյան - *Պետք ա ուղարկեի՞ն, որևէ բան չեն ուղարկել տիկին Խաչատրյան:*

Փաստաբան Կ.Խաչատրյան – *Ի՞նչ անեմ:*

Նախագահող դատավոր Հ. Ավագյան - *Բերեք մի 2 տարի էլ այս մարդուն կալանքի տակ պահենք, ասենք՝ ինչ անենք:*

Փաստաբան Կ.Խաչատրյան - *Պատվարժան դատարան, ես կարծում եմ, որ Ձեր հոխորտանքը իմ հասցեին անհիմն է:*

Նախագահող դատավոր Հ. Ավագյան - Հոխորտանքը կարա Ձերը լինի, չհասկացա էդ ի՞նչ արտահայտություն է, հոխորտանք:

Փաստաբան Կ.Խաչատրյան - *Բա ինձ էնպես եք ասում, կարծես մեղավորը ես եմ:*

Նախագահող դատավոր Հ. Ավագյան - *Նիստը ժամը 14:00-ին է նշանակված, 15:00-ին տասը պակաս է եկել եք, ոչ որոշում ունենք, ոչ...*

Փաստաբան Կ.Խաչատրյան - *Ես զանգել եմ կազմին...*

Նախագահող դատավոր Հ. Ավագյան - *Հետո՞ ինչ զանգել եք:*

Փաստաբան Կ.Խաչատրյան - *Ես կազմին տեղեկացրել եմ, ես այլ դատական նիստով էի, նա ևս դատական նիստ էր:*

Նախագահող դատավոր Հ. Ավագյան - *Ձեր ազգանունը ո՞նց էր, Խաչատրյա՞ն:*

Փաստաբան Կ.Խաչատրյան - *Այո:*

Նախագահող դատավոր Հ. Ավագյան - *Տիկին Խաչատրյան, էդ ի՞նչ արտահայտություն թույլ տվեցիք «հոխորտանք» իմ հասցեին:*

Փաստաբան Կ.Խաչատրյան - *Բա տպավորությունը այնպես է, որ...*

Նախագահող դատավոր Հ. Ավագյան - *Դուք Ձեզ պատասխան տալի՞ս եք ինչ բառ եք ասում:*

Փաստաբան Կ. Խաչատրյան - *Չէ, ինչ բառ, շատ գրական բառ է:*

Նախագահող դատավոր Հ. Ավագյան - *Հոխորտանքը գրակա՞ն բառ է ըստ Ձեզ: Ես հոխորտացի՞ Ձեր հանդեպ:*

Փաստաբան Կ. Խաչատրյան - *Ոնց կուզեք...*

Նախագահող դատավոր Հ. Ավագյան - *50 հազար դրական տուգանք է նշանակվում պաշտպան Կարինե Խաչատրյանի նկատմամբ...*

Փաստաբան Կ. Խաչատրյան - *Ես պաշտպան չեմ հանդիսանում գրվելով գործով:*

Նախագահող դատավոր Հ. Ավագյան - *փաստաբանի նկատմամբ...*

Փաստաբան Կ. Խաչատրյան - *Ես փաստաբան չեմ...*

Նախագահող դատավոր Հ. Ավագյան - *Դատարանի նկատմամբ ցուցադրաբար անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու համար, հենց մասնավորապես այդ «հոխորտանք» բառի համար: Եթե փաստաբան չեք հանդիսանում, նիստերի դահլիճում կարող եք նստել, նիստը դռնբաց է» (տե՛ս դատական նիստի ձայնագրության կրիչը):*

Նշվածի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբան Կարինե Խաչատրյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 09.08.2024 թվականին Դիմողին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ նաև Օրենք)** 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 20.08.2024թ. ներկայացրել է թիվ ԵԴ1/0443/01/24 քրեական գործով դատական նիստի ձայնագրությունը և հայտնել է, որ դատարանն այլ ապացույցների չի տիրապետում:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Կարինե Խաչատրյանին **(այսուհետ նաև՝ Փաստաբան)** առաջարկվել է Օրենքի 39.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ներկայացնել բացատրություն դատավոր Հ. Ավագյանի դիմումի վերաբերյալ, սակայն Փաստաբանը բացատրություն չի ներկայացրել:

Սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 09.08.2024 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 19.08.2024թ. ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Ավան նստավայր 20.06.2024թ. ժ. 14:00 ԵԴ1/0443/01/24 քրեական գործով նախապես չհամաձայնեցված դատական նիստին ներկայացել է ուշացումով, քանի որ մասնակցել է մեկ այլ նիստի՝ ԵԴ/0504/01/20 գործով Կենտրոն նստավայրում, որը ընդմիջվել է սահմանվածից վաղ, որպեսզի Փաստաբանը կարողանա մասնակցել Ավան նստավայրում կայանալիք նիստին:

Փաստաբանը հայտնել է, որ նախորդ նիստը դատավարական գործողությունների պատճառով ուշ է ավարտվել և անմիջապես նիստի ավարտից հետո Փաստաբանը զանգել է Ավան նստավայր՝ դատավորի կազմ և տեղեկացրել ուշանալու մասին: Ըստ Փաստաբանի՝ ավտովթարի պատճառով խցանումներ են եղել և նա ներկայացել է դատարան 40 րոպե ուշացումով:

Փաստաբանը նշել է, որ դատավորը շատ կոպիտ է խոսել Փաստաբանի հետ, ինչի պատճառով վերջինս դիմել է դատարանին՝ ասելով *«Պատվարժան դատարան, ես կարծում եմ, որ Ձեր հոխորտանքն իմ հասցեին անհիմն է»*: Փաստաբանը պնդել է, որ հոխորտանք բառը նշանակում է սպառնալից խոսել, ինչը չի կարող դիտարկվել որպես դատարանի

նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորում, առավել ևս այն դեպքում, երբ փաստաբանը դատավարության մասնակցի կարգավիճակ չի ունեցել, քանի որ ՀՊԳ ղեկավարի որոշումը բացակայել է:

Վերոգրյալի հաշվառմամբ, Փաստաբանը խնդրել է կարգապահական վարույթը կարճել:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 24.07.2024թ. թիվ 308-Ա/ԿԳ-24159 որոշմամբ փաստաբան Կարինե Խաչատրյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 4.1 ենթակետի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

01.08.2024թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին (**այսուհետ՝ նաև Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 30.09.2024թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված է համարվել, որ Փաստաբան Կարինե Խաչատրյանը թիվ ԵԴ1/0443/01/24 քրեական գործով մեղադրյալ՝ Մարզպետունի Մինասյանի իրավունքների պաշտպանության նպատակով 2024 թվականի հունիսի 20-ին ներկայացել է հերթական դատական նիստին և դատական նիստի ընթացքում կատարել է հետևյալ արտահայտությունը՝ *«Պատվարժան դատարան, ես կարծում եմ, որ Ձեր հոխորտանքը իմ հասցեին անհիմն է»*:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 30.09.2024թ.:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 13.11.2024թ. ժամը 19:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստը.

1. Փաստաբան Կարինե Խաչատրյանը թիվ ԵԴ1/0443/01/24 քրեական գործով մեղադրյալ՝ Մարզպետունի Մինասյանի իրավունքների պաշտպանության

նպատակով 2024 թվականի հունիսի 20-ին ներկայացել է հերթական դատական նիստին:

2. Փաստաբան Կարինե Խաչատրյանը դատական նիստի ընթացքում կատարել է հետևյալ արտահայտությունը՝ *«Պատվարժան դատարան, ես կարծում եմ, որ Ձեր հոխորտանքը իմ հասցեին անհիմն է»*:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Կարինե Խաչատրյանը փաստաբան է հանդիսանում 21.09.2005թ. և 2019-2024թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Կարինե Խաչատրյանի կատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 4.1 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի գործունեությունը կարգավորող կանոններին, այդ թվում պետք է հարգանքով վերաբերվի դատավորին և/կամ դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի, արբիտրի, կամ վարույթի այլ մասնակիցների գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ հարգանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը:*

Փաստաբանի գործունեությունը փաստաբանի վրա դնում է բազմազան իրավական և բարոյական պարտականություններ այդ թվում դատարանի հետ փոխհարաբերություններում, որտեղ փաստաբանը ներկայացնում է վստահորդի/պաշտպանյալի շահերը: Այս հարաբերություններում փաստաբանը, նպաստելով իրավունքի զարգացմանը, իրավակիրառ պրակտիկայի բարելավմանը և ձգտելով արդարադատության պատշաճ և իրավաչափ իրականացմանը, պետք է հարգանքով վերաբերվի թե՛ դատարանին և թե՛ հակառակորդ կողմին, ում հետ նա առնչվում է՝ թույլ չտալով անհարգալից վերաբերմունք, քանի որ հարգալից վերաբերմունքի դրսևորումն ուղղակիորեն առնչվում է փաստաբանության ինստիտուտի հեղինակության և

փաստաբանի դերի հասարակական ընկալման հետ:

Քննարկելով Փաստաբանի վարքագիծը վերը նշված համատեքստում՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում պատասխանել հետևյալ հարցադրմանը.

Արդյո՞ք Պատասխանողը դատական նիստի ընթացքում անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի նկատմամբ:

Կանոնագրքի 4.1 կետից հետևում է, որ, որ Կանոնագրքի նշյալ կետի խախտման համար մեղավոր ճանաչվելու համար ենթադրյալ իրավախախտումը պետք է տեղի ունենա դատավարական գործողություն կատարելիս:

Դատարանի կողմից կիրառվող վարվելակերպի կանոնները գործում են դատավարական գործողություններ կատարելիս, իսկ սույն կետի համատեքստում Փաստաբանը պարտավոր է, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին:

Դիմողն, ըստ էության, Փաստաբանին վերագրում է իր նկատմամբ բացասական արտահայտություններ կատարելու վարքագիծը, որը, մասնավորապես, դրսևորվել է նրանում, որ Փաստաբանը դատական նիստի ընթացքում կատարել է հետևյալ արտահայտությունը՝ *«Պատվարժան դատարան, ես կարծում եմ, որ Ձեր հոխորտանքը իմ հասցեին անհիմն է»*:

Հանձնաժողովը հատկանշական է համարում, որ վերոնշյալ արտահայտություններն *այն համատեքստում, որում կատարվել են*, չեն կարող որպես անհարգալից վերաբերմունք դիտարկվել դատարանի նկատմամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

Ըստ Հրաչյա Աճառյանի «Հայերեն արամատական բառարան»-ի՝

- «հոխորտանք» նշանակում է՝ *1. Համարձակություն:*
- «հոխորտալ» նշանակում է՝ *1. Խրոխտալ, խիզախել, հանդգնել, 2. Սպառնագին խոսել, սպառնալ:*

Փաստաբանն իր բացատրության մեջ պնդել է, որ հոխորտանք բառը նշանակում է սպառնալից խոսել, ինչը չի կարող դիտարկվել որպես դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորում, առավել ևս այն դեպքում, երբ Դատարանն իր հետ շատ կոպիտ է խոսել:

Այս առումով տրամաբանական է, որ Դիմողի և Փաստաբանի դիրքորոշումների միջև կարող է հակասություն լինել, ինչը ոչ բոլոր դեպքերում կարող է որակվել որպես փաստաբանի կողմից կատարված խախտում և հիմք հանդիսանալ վերջինիս կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար: Բոլոր դեպքերում Հանձնաժողովը հատկանշական է համարում այն համատեքստը և այն իրավիճակը, որում արվել են կոնկրետ արտահայտությունները կամ կատարվել համապատասխան գործողությունները:

Հանձնաժողովը գտնում է, որ բացասական կարծիքը, բացասական գնահատականը,

կամ որոշակի փաստական հիմք ունեցող գնահատող դատողությունը չի կարող վիրավորական բնորոշվել, քանի դեռ չեն անցել իրավաչափության սահմանները և չեն կատարվել անձի արժանապատվությունը դիտավորությամբ և կանխամտածված ոտնձգելու նպատակով:

Տվյալ դեպքում, փաստաբան Կարինե Խաչատրյանը դատական նիստի ընթացքում հնչեցված արտահայտությունները Հանձնաժողովի գնահատմամբ, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Հ. Ավագյանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու միտում չեն պարունակել, ուստի չեն կարող դրվել կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքում:

Ողջ վերոնշված հանգամանքների հիման վրա Հանձնաժողովը եզրահանգում է կատարում առ այն, որ փաստաբան Կարինե Խաչատրյանը չի կարող ենթարկվել կարգապահական պատասխանատվության, քանի որ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքը՝ փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների առերևույթ խախտումը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և 7-րդ մասով, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Կարինե Ֆելիքսի Խաչատրյանի (արտոնագիր՝ թիվ 162) նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 4.1 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-24159 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-24159-2-Ա
13 նոյեմբերի 2024թ.
ք.Երևան